

238. **Անանուն** + — Մեր համեա մատենագրանին մէջ կայ ՎԱՐԳԱՐԱՆ մը «Սրբունոյ յաւերժապա Ածածնի ի պատիւ Ս. Անուան Մարիա» վերնագիրով որ 84 շրջափակ էջերով և միջակ յաջողութեամբ **Վիմագիր**՝ կարոյիկ Հայոց աղօթագիրք մըն է, և որուն ճակատը դրոշմուած կայ ԹՐԻԷՍԹ 1843 : Տպարանի անուն չէ յիշուած, միայն Բ. բողոքին վրայ կը կարդանք. «Առ նոգեակ Ազնուութիւն Պրն. Անտոն ճարտարապետեան, Նուէր սիրոյ և յարգանաց, ընծայէ Ն. Թէօֆիլ Ռուրինեան» : Այս Վարդարանը կը պարունակէ Յիսուսի Մօր 5 վիմատիպ պատկերները : — Արդ, զիտենք թէ 1811 ին, այսինքն վերոյիշեալ բուականէն 33 տարի առաջ՝ Մլխարեանք Թրիեսթեէն ելած և Վիեննա անցած են. որով սոյն աղօթագիրքն իրենց տպագրութիւնը չէ :



Գ Լ Ո Ւ Ե Գ

1633 է.ն
սկսեալ

Յ Ր Ա Ն Ս Ա

մինչեւ
1912

Ֆրանսայի քաղաքներէն մեզ կը ներկայանան ԲԱՐԻՉ և ՄԱՐՍԻԼԻԱ միայն ուր նայ և օտար տպարաններ գրադած են մեր լեզուով գիրքերու և բերքերու տպագրութեամբ : — Մեր ուղղութեան համեմատ, ՖՐԱՆՍԱ պետք էր որ կանխէր ԹՈՒՐԲԻՍԱՆ, քանի որ ի **Պօլիս** նայ տպագրութեան սկզբնաորութիւնէն [1567] 30 տարի առաջ [1537] ի ԲԱՐԻՉ դրոշմուած կը տեսնենք

239. **Փօսթէլի** ի կողմէ՝ 12 լեզուներու ալֆաբետը պարունակող 75 էջոց գիրք մը որուն մէջ նայերէն այբուերենք ալ կար. ինչ որ բաական չէր սակայն զուտ նայեցի տպագրութիւն մը նկատուելու և իր նմութեանը տեսակետով արժանի՝ դատուելու յառաջ քան 1567 բուականը : — ՓՕՍԹԷԼ ճնած է 1512 ին Օրանո՛ : Բանասեր-լեզուագետ : Պետ. անձի մը ընկերացած, ճամբորդած է Պօլիս, Յունաստան, Փոքր Ասիա և Սուրիա, և այդ տեղերուն բնակչաց լեզուներով գրադած է Յետոյ անցած է Իտալիա և ծանօթացած ԹԵՍԷԼՍԱ ԱՄԲՐՈՍԻՈՍԻ [տե՛ս 20 բուահամար] որմէ արեւել. ազգաց ձուլածոյ տառերու նետ կ'ստանայ նաեւ նայ և քաղղեական լեզուներով «նայր մեր»ը : Հոնկէ դարձած է Բարիզ և տպագրութեան յանձնած **12 լեզուաց ալֆաբետք**ը պարունակող գիրքը. «Linguarum duodecim characteribus differentium alphabetum, introductio ac legendi modus longè facillimus». միայն թէ ամենուն ալ յիակատար տառերը չունենալուն՝ պակասմանը փայտի վրայ փորագրածներով ամբողջացուցած է : Փօսթէլ այդ գիրքով ջանացած է ապացուցանել թէ ամէն բարբառ. երբայականէն ծագած է : Կրկին Արեւելք ուղևորած է և զննած բանկագին ձևուագիրներ գորս վերջէն ծախած է Բարիզի և Գերմանիոյ Մատենագրաններուն :

240. **Արքունի կամ Ազգային Տայ** (IMPR. ROYALE OU NATIONALE)ը Ֆրանսուս Ա.ի օրով հիմնուած է Վիէյ տի Թամբլը փողոց, ապա փոխադրուած Քոնվանսիօն փողոց և յատկացուած կառավարական պաշտօնաբարութիւն ևն. գործերու տպագրութեանց : Այս տպարանը կրցած էր նախապէս նայերէն տառեր ալ. իր նպատակն էր արեւելեան լեզուներով գիրքեր տպել, որպէս զի իր ազդեցութիւնը տարածուի Արեւելքի մէջ : — Հոն դրոշմուած են 1633 ին **Բառգիրք Հայոց** (նյ. լու., նեղինակ՝ ի Միլլան նայ. քերականութիւն հրատարակող Ֆրանչիսկօ Ռիփօլա), 1634 ին **Առաւել պարզաբանութիւնք** (նեղինակ Պետրոս Պօլոս նաչագրի քնն.) Բ. տիպ, 1812 ին **Փորձառութիւն հայկ. լեզուի**, 1818 ին **Տեղեկութիւնք ի վերայ այժմեան կացութեան քաղաւորութեան Պարսից** «տուեալ ի Դա-